

## ՌԱԿ-Ի ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Պատմության ընթացքին մեծաւ մասամբ արժանաւոր գահակալներ ունեցած ենք նուիրապետական կամ արքայական աթոռներու վրայ: Ունեցած ենք նաեւ հոգեւոր եւ աշխարհական պատուարժան գործիչներ, բարերարներ ու մտաւորականներ որոնք մինչեւ իսկ ամենադառն ժամանակներուն իրենց սխրանքներով միշտ բաներ մը երկնած ու աւելցուցած են մերազն ժողովուրդի հոգեւոր ու տոհմիկ ժառանգութեան վրայ: Ասոնց շարքին դժբախտաբար եղած են նաեւ անարժաններ, որոնք մի՛շտ ալ պահուըտած են գահերու, զարդարուն տիտղոսներու, դիրքի կամ հարստութեան ետին իրենց խաւարամուլար գործերն ածելու նպատակաւ: Տէր Աստուած պահէ մեր ժողովուրդը վերջիններուն նման հոգեւորական եւ աշխարհական չարագործներէ:

ՌԱԿ-ի Կեդրոնական Վարչութիւնը, իր յայտնի նախագահով, որ անձնական քարտուղարն է ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետուհիին, ընդդէմ Պատրիարքական Աթոռոյս գահակալին հրապարակ իջաւ մամլոյ երկրորդ հաղորդագրութեամբ մը, որ ծայրէ ի ծայր աղաթաթաւ յերիւրանք ու զագրագոյն խաբէականութիւն է: Ափսոս~ս ՌԱԿ-ին եւ ՀԲԸՄ-ին ինկած ողբալից վիճակին:

Խնդրոյ առարկան այստեղ միջազգային յարաբերութիւնները չեն: Ոչ ալ որեւէ առընչութիւն ունի հարցը մեր Եկեղեցւոյ նուիրապետական աթոռներու փոխ-յարաբերութիւններուն՝ եւ կամ հոգեւորականներու նոր սերունդի պատրաստութեան հետ: Ասոնք պարզապէս արուեստական պնդումներ են, զորս ՌԱԿ/ՀԲԸՄ-ի խմբակը կ'օգտագործէ բուն նիւթը պղտորելու միտումով:

Այլեւս արար աշխարհի հասկցած է. ՌԱԿ/ՀԲԸՄ-ի գործակիցներուն ահափետութեան եւ իրարանցման բուն պատճառն այն է, որ անկարող են ներկայացնելու 1925 թուին Պատրիարքական Աթոռոյս կողմէ իրենց փոխանցուած Մելգոնեան Կտակի հաշիւը: Ի՞նչ եկաւ 1920-ական թուականներուն 3,5 միլիոն ԱՄՆ տոլար արժող Մելգոնեան հարստութեան գլխուն: Եթէ Մելգոնեան կտակը լաւ մատակարարուած էր մինչեւ այժմ՝ այն ատեն ՀԲԸՄ ինչո՞ւ Եւրոպական Միութեան մէջ գործող միակ հայկական լիկեւնը փակելու եւ վաճառելու որոշում տուած է: Մերազն ժողովուրդը հաշիւ պահանջելու իրաւունք չունի՞ արդեօք, մանաւանդ որ ըստ կիպրահայ համայնքի անդամներուն Մելգոնեան Կրթական Հաստատութեան շէնքերն ու տարածքը այսօր շուրջ 120 միլիոն ԱՄՆ տոլար կ'արժեն:

ՀԲԸՄ/ՌԱԿ-ի զուտ կրթական հարց մը միջազգային կամ եկեղեցական-նուիրապետական գետին քաշելու անընկալ քաղաքականութիւնը այս պարագային հինգած, նենգ հնարամտութեան փորձ է միայն: Տխուր բարբաջանքներով, փուճ ու սևանկացած քաղաքականութեամբ, իր իսկ գոյութեան պատճառը հանդիսացող ժողովուրդն անտեսող ու արհամարհող որեւէ խմբակ ինքզինքն է որ դատապարտած կ'ըլլայ խղճալի վիճակի:

Առանց այլեւայլի, ՀԲԸՄիութեան եւ անոր հետ առընչուող ՌԱԿ-ի անդամներուն, յանուն մեծահոգի բարերար Կարապետ Մելգոնեանի եւ ի դիմաց Երանաշնորհ Չաւեն Պատրիարքի եւ Մելգոնեան կրթօճախի աշխարհասփիւռ համակիրներուն՝ անգամ մը եւս հրապարակաւ կ'ըսենք. «Տուր զհամար տնտեսութեան քո» (Ղուկ. ԺԶ.2):

Տէր Աստուած թող օրինէ՛ ազգային մեծ բարերարներ՝ Կարապետ եւ Գրիգոր Մելգոնեաններու ազնիւ յիշատակը: Յատկապէս այս օրերուն երբ կը խորհրդածենք մեր Տիրոջ եւ Փրկչին անանձնական սիրոյն ու ինքնամատոյց զոհաբերման մասին, կը մաղթենք որ Զրիստոսի սերը թափանցէ այս մեծ բարերարներու բարի յիշատակն ու կտակը շահագործելու փորձութենէն անցնողներու սրտէն, մտքէն ու հոգիէն ներս: Կը մաղթենք որ անոնք իրենց կասկածափորձ ուղիէն կը դառնան դէպի մեր Երկնաւոր Հօր գորովագութիւն ու երկայնամիտ գոգը:

ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԵՈՒԹԵԱՆ  
Ստանպուլ, 19 Մարտ 2005